



# ՍՈՒՐԲ ԶԱԿՈՒՄ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Յիսուսի Հրագերորդ Կրտսեր  
25 ԴԵԿԵMBER 2022

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՒ ԳԻՐՔԵՆ  
(40.18-31)

Որո՞ւ կը նմանցընէք զԱստուած  
կամի՞նչքանի հետ կը բաղդատէք:  
Կուռքի՞։ Բայց ձուլագործն է որ  
կուռքը կը ձուլէ, ու ոսկերիչը զայն  
ոսկիով կը պատէ եւ արծաթէ շղթաներ  
կը շինէ անոր համար։ Նմանապէս  
հիւսնը անփուտ ծառի կոճղ մը կ'առնէ  
եւ իր ճարտարութեամբ կ'աշխատի  
անկէ անշարժ կուռք մը շինելու։  
Այնքան տգէ՞տ էք, չլսեցի՞ք կամ ձեզի  
չպատմուեցա՞ւ երբեք Աստուծոյ մասին,  
որ երկրին հիմերը դրաւ։ Աստուծոյ  
մասին, որ կը նստի երկրագունտէն  
այնքան վեր՝ որ երկրի բնակիչները  
մարախներու չափ կ'երեւին իրեն։  
Ան է որ երկինքը վարագոյրի պէս կը  
տարածէ եւ զայն վրանի պէս կը կանգնէ  
իրեն համար։ Ինքն է որ իշխանները  
կը բնաջնջէ եւ երկրի դատաւորները  
կ'ոչնչացնէ։ Բոյսի մը պէս անոնք  
հազիւ տնկուած կամ ցանուած, եւ  
տակաւին հողին մէջ չարմատացած՝  
կը փչէ անոնց վրայ եւ կը չորնան, ու  
փոթորիկը զանոնք կը տանի յարդի  
պէս։

Արդ, «Որո՞ւ կը նմանցընէք զիս, ո՞վ

կը հաւասարի ինծի», կ'ըսէ Սուրբը,  
Աստուած։ Երկինք բարձրացուցէք ձեր  
աչքերը եւ դիտեցէք. ո՞վ ստեղծեց  
այս բոլոր աստղերը, եթէ ոչ ան՝ որ  
զանոնք իրենց անուններով կը կանչէ։  
Այնքան մեծ է իր իշխանութիւնը եւ  
սաստիկ՝ իր զօրութիւնը, որ անոնցմէ  
որեւէ մէկը դուրս չի գար իր խօսքէն։  
Ինչո՞ւ կը տրտնջաս ուրեմն, ո՞վ թակոր,  
կամ ինչո՞ւ կը մտածես, ո՞վ իսրայէլ,  
ըսելով. «Տէրը իմ վիճակս չտեսաւ,  
իմ Աստուածս իրաւունքս մոռցաւ»։  
Չե՞ս գիտեր, տակաւին չհասկցա՞ր թէ  
յաւիտենական Աստուածն է ան, որ երկրի  
սահմանները ստեղծեց.

... Տիրոջ  
ապաւինող -  
ները իրենց  
ոյժերը  
է անոր իմաստութիւնը։  
Ինքն է որ ոյժ կու տայ  
յոգնածին, կը զօրացնէ  
տկարացածը։ Նոյնիսկ  
երիտասարդները պիտի  
յոգնին ու թուլնան, եւ  
կտրիճները՝ յուսալքուին, բայց Տիրոջ  
ապաւինողները իրենց ոյժերը պիտի  
վերանորոգեն եւ արծիւներու պէս  
թեւ ու թոփչք ունենան. պիտի վագեն  
առանց թուլնալու, պիտի քալեն առանց  
յոգնելու։

ապաւինող -  
ները իրենց  
ոյժերը  
պիտի  
վերա-  
նորոգեն եւ  
արծիւներու  
պէս թեւ  
ու թոփչք  
ունենան...

**ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ  
ՆԱՄԱԿԻՆ  
(4.16-5.10)**

**Յ**յունհետեւ համարձակօրէն մօտենանք Աստուծոյ աթոռին, ողորմութիւն եւ շնորհք գտնելու համար, որպէսզի անոնք մեզի օգնեն անհրաժեշտութեան պարագային:

Արդարեւ, ամէն քահանայապետ որ մարդոց մէջէն կ'ընտրուի, պաշտօն ունի մարդոց կողմէ Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ մտնելու եւ անոնց մեղքերուն համար նուէրներ եւ զոհ մատուցանելու: Եւ որովհետեւ ինքն ալ մարդ է, կրնայ հասկնալ մարդոց տգիտութիւնն ու փորձութիւնները եւ կարեկցիլ անոնց, քանի ինք եւս նոյն տկարութիւնները ունի: Ասոր համար է, որ ինչպէս ժողովուրդին՝ այնպէս ալ իր սեփական մեղքերուն համար պէտք է զոհ մատուցանէ:

Գիտէք նաեւ թէ ոեւէ մէկը չի' կրնար ինքն իրեն քահանայապետութեան պատիւը առնել, այլ Աստուծած է որ զայն այդ պաշտօնին կը կանչէ, ճիշտ ինչպէս Ահարոն կանչուեցաւ: Նոյնպէս ալ Քրիստոս, ինքն իրեն չառաւ քահանայապետութեան պատիւը, այլ զայն ստացաւ Աստուծմէ, որ իրեն ըսաւ. “Դուն իմ սիրելի Որդիս ես, այսօր քեզ ծնայ”, իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. “Դուն յաւիտեան քահանայ ես, Մելքիսեդեկ քահանային պէս”:

Իր երկրաւոր կեանքի ընթացքին, Յիսուս մեծ աղաղակով ու արցունքով աղօթեց եւ աղաչեց Աստուծոյ, որ կրնար զինք մահուընէ փրկել: Եւ Աստուծած զինք լսեց, որովհետեւ

խոնարհ էր, բայց իր չարչարանքներու փորձառութեամբ սորվեցաւ թէ ի'նչ բան է հնազանդութիւնը: Եւ այսպէս կատարեալ ըլլալէ ետք, յաւիտենական փրկութեան պատճառ եղաւ բոլոր անոնց համար որոնք իրեն կը հնազանդին, քանի Աստուծած զինք քահանայապետութեան կոչած էր, Մելքիսեդեկ քահանային պէս:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ  
(18.9-14)**

**Յ**ս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին: «Երկու հոգիներ տաճար գացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ'աղօթէր. “Աստուծ իմ, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց նման յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ”: Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. “Աստուծած, ներէ մեղաւորիս մեղքերը”: Կ'ըսեմ ձեզի, - եզրակացուց Յիսուս, - ո՞չ թէ փարիսեցին, այլ մաքսաւորը արդարացած գնաց տուն. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»: